ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

31 մայիս 2022

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Արշավիր Բայաթյանը, Դավիթ Հարությունյանը, Սոնա Մարգարյանը, Դավիթ Մովսիսյանը, Տիգրան Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Էմիլ Սարգսյանը, Արմեն Վարդանյանը:

**Նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Հայկանուշ Ավագյանը:

***Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը***

***Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:***

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ մայիսի 31-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 31-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-12 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին.
***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը, քննարկելով համայնքի /բնակավայրերի/ դպրոցներից ստացված դիմումները և քաղաքացի Արթուր Բադալյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից հատկացնել դրամական օգնություն.

1) Համայնքի /բնակավայրերի/ դպրոցների ավարտական դասարաններին՝ ըստ աշակերտների քանակի՝

ա. «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-ի 1-ին դասարանին - 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ /21 աշակերտ/

բ. «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-ի 2-րդ դասարանին - 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ /20 աշակերտ/

գ. «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-ի 3-րդ դասարանին - 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ /13 աշակերտ/

դ. «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-ի 4-րդ դասարանին - 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ /22 աշակերտ/